ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2026թ. թիվ 792-Ա

Փ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22.1 մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի օգոստոսի 20-ի թիվ 641-Ա և 2026 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 755-Ա որոշումները, հաշվի առնելով Փ.Հայրապետյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Փիրուզա Հայրապետյանին տրամադրել 2026-2027թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը 2026 թվականի նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 14-ը ներառյալ՝ 16 աշխատանքային օր:

2. Փ.Հայրապետյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի դեկտեմբերի 15-ից:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Կից գրությամբ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Փ.Հայրապետյանի պարտականությունները կատարող նշանակելու համար:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-11-23 12:06:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. նոյեմբերի 23
ք.Վանաձոր